

Մ Ե Ն Ա Ս Տ Ա Ն Ի Ն Կ Ո Յ Ս Ը

ՀՍՏ ՍԻՊԻԼԻ (Զ. ԱՍՍՏՈՒՐ)

Կէս գիշեր է. սենեակիս մէջ միայնակ՝
Կանթեղ չունիմ, ոչ ալ երկինքն ունի շող.
Իր լոյսն յետին մարեց դարպասն ու տընակ,
Եւ մընացի իմ խոհերուս հետ մաշող:

Կը թափառին շուրջս ըստուերներ թանձրահոծ,
Մերձենալով հեռանալով յամրաբար,
Եւ կը լըսեմ իրենց վայելն ողբակոծ,
Երբ կանգ առնել կու գան յոգնած ու մոլար:

Տըխուր մտքիս ուրուականներն են համակ,
Յընորդ հոգւոյս հազիւ հասած արբուքի,
Եւ մինչ կ'անցնին օրերըս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կու տան ինձ ըստփանքն արցունքի:

Զի մինակ եմ հոս դէմքերու հետ տրտում,
Կոյսերու հետ, որոնք չունին իղձ ու խանդ,
Որոնց ձայնին վանկերն՝ աղօթք անպատում՝
Կը խորտակեն երազս ու յոյս մանաւանդ:

Ապրիլ կ'ուզեմ. անոնք երկինք ցոյց կու տան.
Սիրելի կ'ըզմամ. կը գոչեն. «Սէր է Աստուած».
Եւ կը պատմեն Ղաւիթը, Յոբն ու Յուդան.
Կ'ըսեն. «Միայն մահուան համար ենք հաստուած»:

Զոր կը վառէ երկինք արեւն ու լուսին,
Զօնելով կեանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
Ես կը դառնամ նորէն համեստ այն լոյսին
Որուն ներքեւ լուռ կը հըսկէ աչք մ'արթուն:

Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տաք,
Որ խառնուի տենդոտ հոգւոյս յորձանքին,
Եւ Սաղմոս մը կը դընեն, անհ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտէ ընդդէմ սրտի փորձանքին:

Այդ փորձանքներն ես կ'երագեմ անդադար,
Կեանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մէջ չընչին բաժինս իմ արդար,
Եւ կը թողում երկինքն իրեն սուրբերուն:

ՀՍՏ Բ. ԵԼՊԻՍ ԿԱՊՐԱՇԵԱՆԻ

Ինչպէս թըռչնիկ ընդելացած փականքին՝
Երգէ հեշտիւ գիւր դայլայլիկ խնդագին.
Տէր, տուր գերեզմանս աստ կամաւոր բանտարգել
Սուրբ վայելքներն, զերանութիւն իւր երգել:

Թէպէտ հեռի՛... թողի ծընողք սիրասուն,
Անձնիշխան կեանք, սէր, հայրենիք, գոյք և տուն.
Բայց դու, Աստուած, սըրտիս բաժին երկնածիր,
Քեզմով եւեթ զամէնն ինձի դարձուցիր:

Օթեւանէս երանաւէտ, խաղաղիկ,
Տեսնեմ զաշխարհ ըմբոստ ալեաց խաղալիկ,
Ուր մահացուք անվերջ մրցմամբ կը յուզին,
Եւ մըշտածուի իշխան, կանգնին և սուզին:

Իսկ թէ ի վեր աչկունքս դառնան... յոյս անուշ՝
Երկնից կապոյտ պատռէ մատամբ իր քնքուշ.
Հոն նըշմարեմ ինձ պահուած փառք մեծափառ,
Խինդ մըշտատեւ, սիրոյ աղբիւր անըստառ:

Սիրել սիրուի՛... ո՛հ ըմբռնեմ զայս գաղտնիք,
Որով միայն սիրող սիրտք են երջանիկ.
Եւ դու, ո՛ հէր, չէս սիրոյ նիւթ անըման,
Կեզրոն բարեաց, գեղեցկութիւն անսահման:

Յանհունըս թող սըրտիս բոցեր ընդլայնին,
Զի բաժին ինձ ընտրած եմ սէր Անհունին.
Թող հուր, թող բոց զիս խոշտանգեն վիշտք համայն,
Ժըպիտ են ինձ, սընունդ սիրոյս, փառք միայն:

Այո՛, ո՛ հէր, թող ըլլամ աստ ողջակէզ,
Երբեակ զօղիւքս անքակտելի յարիւմ քեզ.
Փառքիդ շուքին ներքեւ պարծիմ իբր ըստրուկ,
Թող ըստառիմ տաճարիդ մէջ գերդ կընդրուկ:

Եւ երբ աշխարհ իր Արարչին յանդըզնի
Ատել զանուն, ըլլալ շանթիցն արժանի,
Ո՛հ, զոհէ զիս, անուանդ ահեղ նախատուած,
Փըրկէ զաշխարհ, փըրկէ մարդիկ, ո՛ Աստուած:

ՍՈՒՍԱԿԻՆ ԵՐԳԸ

ՈՒՂԵՐԶ

Առ Ամենապատիւ Գերերջանիկ Տէր
Տէր Ստեփանոս-Պետրոս Ժ. Ազարեան
Կարողիկոս Պատրիարք Տաճն Կիլիկիոյ

Եւ քաղցրոյն երգ սոխակին
Շառոց մէջէն նսեմաստուեր
Խորհրդաւոր լուռ պուրակին
Սուր և ըմբոստ սլանար վեր:

Հազիւ մարէր ան վերնագոյն
Խաւերուն մէջ թեթեւ կապոյտ,
Գեղեցիկ մ'ալ նոր հասնէր իսկոյն
Կցուիլ երգին ոլորտապտոյտ:

Այնպէս որ յար փոփոխակի
Սարքեն հանդէս մը դիւթական,
Զարմանահիւս երգք սոխակի
Սուրբ խրախճանք սրտի մարդկան:

Երբ հանդէսին սիրահաւէր
Ալեաց միջեւ եթերային,
Քաղցր հիացմամբ սիրտք արշաւէր,
Զիս դղրդեց խորհուրդ մ'ուժգին:

Եւ ցանկացայ վայրկենին այն
Փոխ առնել ինձ այն վեհ շէտեր,
Ու մէկ սոյլով անուշ երկայն
Երգել անդու, Վեհափառ Տէր,

Անուանդ փառքեր, հոգւոյդ գորով,
Զիրքերդ ազնիւ գերմարդկային,
Կամ այն թրթռուն յանգրգնեցող
Երգել Անունդ ապագային:

Սակայն միթէ աւելի հեշտ
Քան անբարբառ երգն անմահ
Զէն մեր լեզուին վանկերն ու շէտ,
Սիրող սրտիս գողտրիկ թարգման:

Ուստի գոչեմ ես խնդագին.
Ո՛հ Վեհաշուք Տէր իմ և Հայր,
Դու փառք սրտիս, վայելք անգին,
Ապրէ անդորր, ընդ ամս յամայր:

Դու Հայր ազգին, բայց մանաւանդ
Ինձ պէս որբին անպատասպար.
Հայր, ոյր սրտին գոթ արգաւանդ
Բխի, հոսի միշտ, անսպառ:

Եւ բաբախուն բիւր սրտից քնար
Վճիտ լարերով նրբին վէտ վէտ
Եղանակաւ նորահնար
Պիտի կրկնեն իմ երգս յաւէտ:
1897 Նոյեմբեր

ԻՂԶՆ ԻՄ ԱՌ ՄԱՐԻԱՄ ԿՈՅՍ

[Փայլ]

Մարիամ, Կոյս Սուրբ, հովտաց շուշան ձիւնա-
Որ կը ցրուէ մութ աշխարհիս մէջն ու մոայլ,
Եւ էութիւնդ անբիծ, վսեմ, համակ լոյս,
Այս ափանց վրայ կը սփռէ բոյր, սէր և յոյս:

Այնչափ մեծ ես և հզօր, Կոյս երկնագեղ,
Որ Աստուծոյ ցատուսն արդար և ահեղ [Թեան,
Կ'իջնայ իսկոյն՝ երբ մեղսապարտ մարդկու-
Տեսնէ զքեզ պաղատագին փաստաբան:

Եւ անսկիզբ, անծայրածիր, Բանն անհուն,
Ստեղծողն ինք տիեզերքի և մարդուն,
Աստուածափայլ գեղեցկութեանդ հիւանայ
Ու կուսական արգանգիդ մէջ յղանայ:

Այնուհետեւ որչափ դարեր հոլովին,
Արքայազունք և հանճարներ խմբովին
Կանգնեն Անուանդ պայծառագեղ, լուսասփիւռ
Տաճարներ ձոյլ ոսկի, զմրուխտ և պորփրիւր:

Բայց այս ամէնն ի՞նչ են արդեօք, ո՛հ, ոչինչ,
Իղձերուս քով և Պատկերիդ սուրբ և շինչ:
— Կ'ուզեմ ես որ մարդիկ և հոյժք երկնային,
Փոփոխակի քեզ «Երանի» կարգային:

Կ'ուզեմ խել ամէն սրտերն զգայուն,
Մարգաց դալարն, յասմիկն ու վարդ օրն ի բուն,
Զօնել քեզ, Մայր Անարատ, Կոյս գեղանի,
Ամէն բարեաց ո՛վ Գանձարան կենդանի:

Կ'ուզեմ տեսնել, բեւեռներէն մէկէն միւս
Զքնաղ Անունդ ընդելուզեալ ոսկեհիւս.
Եւ անդադար արշալոյսէ արշալոյս
Նոր մեղեդի յերիւրել Մ'օրդ Աստուծոյս:

Կ'ուզեմ դարձեալ արեւելքէն արեւմուտ,
Կտրել անցնիլ ցամաքն ու ծով յորձանուտ,
Տեսնել բոլոր ոխերն ու քէն խորտակուած,
Տեսնել զաշխարհ Կուսիդ սիրով համակուած:

1898 Մայիս

Ս. ԴԱՍՏԱՌԱԿԻՆ

Ով Սուրբ Պատկեր աստուածային
Օրհասական դու զոհ անմեղ.
Արիւնլուայ և տխրագին
Ցաւոց միջև անլուր, ահեղ:

Նկատելով խոցերդ ու փուշ,
Այդ նուազեալ աջացդ լոյս,
Իմ ալ վշտեր դառնան անուշ.
Հոգիս լեցուի սէր, ցաւ և յոյս:

Գունատ այտիցդ արեան վտակ
Իբր զովարար երկնային ցօղ
Մարգարտի պէս՝ կայլակ կայլակ
Խորը կաթէ սրտիս հեծող:

Պաշտելի դէմքդ, ով Տէր Աստուած,
Զարչարանքերդ դառն ու դաժան,
Ճակատդ վեհ, ախ պատուաւած,
Մեր վէրքերուն են բաւասան:

Եւ կը գտնեմ, Սուրբ Դաստառակ,
Քու փուշերով մէջ սայրասուր,
Համբերութեան ոյժ երկնառաք,
Վշտաց ժպտիլ իսկ անսարսուռ:

Մեզի համար դու յանձն առիր
Քամե՛լ բաժակն այն դառնութեան
Մեր ցաւերուն տաժանակիր
Մեղր խառնել բազմաբուրեան:

Սրբագործել դու ուզեցիր
Երկրիս ցաւերն ու բեռն ճնշող.
Արիւն արցունք դու ցանեցիր
Որ մենք քաղենք կեանք երկնաշող:

Գոհութիւն քեզ, Դէմք Աստուծոյս,
Առ մարդկութիւն սիրոյդ անբաւ,
Որոյ բաշխես սէր, հաւատք, յոյս,
Իր փրկութեան կու տաս գրաւ:

Գոհութիւն քեզ ով Մարդ-Աստուած,
Փըշկաւակ վշտաց Արքայ.
Կ'ողջունեմ քեզ բազկատարած
Անպարագիր փառաց Արքայ:

1893 Ապրիլ

(Հոգեկից Զրոյ մը խնդրամբով գրուած)

ՍԻՄՈՆԻ ԵՒ ԻԻՐ ՊԱՊԸ

Սիմոնիկն է սիրուն, կայտառ, խոստափուկ,
Հնգետասան ամիսներու մի մանուկ.
Անառակ մը զարհուրելի, միշտ ի գործ
Տան ամէն կողմ կը տեսնենք զինք միշտ ի փորձ:

Նոր արշաւանք, նոր աղմուկ, նոր խաղ սարքել,
Ամէն անկիւն մտնել, ելլել անարգել
Քարշ տանելով հանդերձանքներն - կառք ու ձի -
Իր կարեւոր արշաւանքին փառացի:

Ուր չի բաւեր մանկական ոյժն և հասակ,
Կ'օգնէ իրեն հսկայի ճիւղ նոր տեսակ.
Եւ հարկ կ'ըլլայ որ տեղի տան կղպանք, դուռ,
Ասպատակիս քայլերուն տակ առաթուր:

Երբ զբաղած մեծ գործերովն անձանձիր,
Յանկարծ թողու խաղալիքներն ցան ու ցիր.
Ճըլուղիւնով սուր, խօշական, ոլորուն,
Վագէ, սուրայ, նոր ոյժ տալով քայլերուն:

Առ ծերունին պատկառելի, ալեհեր,
Քրիստոնեայ մը, հաւատացեալ մ'անվեհեր,
Որ ներս մտնէր ընթացքով յամր ու հանդարտ,
Ժպտիտով մը կէս թախծագին, կէս զուարթ:

Յական քթթել ծերունւոյն գիրկն է թառած.
Սպիտակ գլուխն բազկիկներուն մէջ առած,
Զերթ շիթ մը ցօղ խամրելու մօտ ծաղկի գիրկ
Թերթից խորշումքը պարզելով փայլի գիրկ:

Կառքեր, ձիեր, գետինն ինկած կան իւր շուրջ.
Անհրապոյր այլ եւս. իսկ ինք լուռ և լուրջ,
Արհամարհոտ աչքեր դարձնէ աստ և անդ
Ալեւորին երկնապարգեւ այս աւանդ:

Հակապատկեր, ոհ, ներդաշնակ, սրբանուէր.
Մանկիկ - կենաց արշալոյս ջինջ անըստուեր -
Ծեր - վերջալոյս քաղցրանըշոյլ տխրագին, -
Ո՞վ չ'ապշիր ձեր ի մի զուգած հըմայքին:

Երկուքն ալ սուրբ. մին անշօշափ հըրեշտակ,
Միւսն ալ պարտքին համակերպած նահատակ.
Մին որրանէն, համակ ծիծաղ թոխէ պարզէ,
Միւսն ալ դադրած՝ շիրմին մօտ մահ կ'երագէ:

Եւ ծերունին վայելից զուտ անկըշիռ
Երագին մէջ կաշկանդուած էր լուռ արբշիռ.
Այնչափ ամաց աղէտն ու ճիգ, բեռն ամէն,
Յնդեցան այս երանութեան սեղմումէն:

Մոռցաւ թէ մահն, հորիզոնին, ախ քանի
Պայծառ աստղեր, ժըպիտ և յոյս կենդանի,
Նոր մարած էր, և թէ կենաց բաժակէն
Գունատ շրթներն դեռ դառնութիւն ճաշակեն...

Այնչափ քաղցր է և հմայիչ կենաց դառն
Բաժակին քով այլ մի բաժակ բոյր անխառն.
Երթամած վարդին քով ալ կոկոնիկ,
Կորաքամակ ծերունւոյն քով Սիմոնիկ:

Տրապիզոն

1895 Մայիս

ԱՌ ՄԱՅԻՍ

Ո՞վ Մայիս չքնաղ, ողջոյն քեզ ողջոյն.
Դու մայր բնութեան, դուստր գեղագոյն,
Կամ նազելաշուք Վսեմ տիրուհի,
Որ ձայն տաս իրեն քունէն դժպիւն:
Ոսկի մականիդ հպումէն մեղմիկ
Ընդոտ կ'արթնան, սարսին ծիւլ, ծաղիկ:

Յասմիկ ձիւնափայլ, մեխակներ ու վարդ,
Բիւրեղ մարգրիտ լուսեղէն ու բարդ,
Շուշան բեհեզայ, նուրբ, պեծահասակ,
Փունջ փունջ բոլորեն դէմք լուսապսակ.
Հծծիւնով դիւթիւ բերեն աւետիս,
Դարձը հոշակեն ապշահար երկրիս:

Կ'անցնիս դարերով, լոկի ու գործօն,
Պարտաճանաչ կոյս, ժրագլուխ և զգօն.
Բլուրներն ի վեր, ձորերն ու սարեր,
Որոնց արգանդին ջախջախես սառեր.
Եւ բոյր անապակ, թաւիշ զմրուխտի
Սփռես կենսատու մատովդ դեռատի:

Շղարշիդ ոսկեթել առէջքով հիւսկէն
Ուր ցօղեր շիթ շիթ աղամանդ սրսկեն
Բիւր ոլորտներէն անգայտ, ծամածուռ
Անդու կը թափես կեանքի կայծ և հուր,
Ուսկից կը ժայթքեն աղօթք, յոյս ու սէր
Զերթ խորանին սուրբ ջահերէն լոյսեր:

Մի հեռանար դու, Մայիս պերճագեղ.
Պահէ մեր սրտերն դաւար ու շքեղ.
Բաշխէ ամէնուս արեւ ու կորով,

Թօթափէ բոյրերդ բիւ բիւ ափերով.
Բայց անոնց որ են հոգւոյս սիրելի,
Տուր ծաղիկներէդ փնջիկ մ'աւելի:

ԽՈՆՁ ԹԱՅՆԱԿԸ

Հանդիսաւոր պահ մ'էր այն ուր ոսկեթոյր
Շունչ գեփիւտին կ'ոգեւորէր բոյս և բոյր,
Նուիրելով բնութեան նոր արդուգարդ,
Հիւսէր ծաղկէ պերճ պսակներ բարդ ի բարդ:

Մեծ զարթումին հոգիս կարծես անտարբեր,
Լուրջ խոհերէ ալեծփուած տառապէր.
Երբ նշմարեց թռչնակի մը գորշ ստուեր
Որ օդին մէջ բախէր արագ զոյգ թեւեր:

Եւ թառեցաւ հաւիկը լուռ անշունջ [փունջ,
Վճիտ առուակին շամբերուն վրայ փունջ առ
Ամփոփելով թեւեր թաւեայ և նրբին,
Լանջքն ալ տալով զգուանքներու զեփիւտին:

Քիչ հիւրասէր ցօղուններն այն ճղճիմ, սին,
Կը ծփծփան թեւերուն տակ թռչնիկին,
Որ անհանդարտ կը բացլիփէր, թեւածէր
Ալետաւան ճօճումին դէմ մաքառէր:

Ու կարծեցի տեսնել պատկերն այն մարդուն
Որ թափառի բախտախնդիր մոլորուն,
Ալեաց միջեւ ստուերամած առ խարխափ
Երջանկութեան ծարաւէն խոնջ յուսախաբ:

Զերբ է ուրեմն կապոյտն ու շող երկնքին,
Դաշտաց զմրուխտ, հեզիկ մրմունջն առուակին,
Շիթերն ցօղի արշալոյսին խաղաղիկ:
Համբաւ, ոսկի, սիրոյ բուրում ու ծաղիկ,

Անուրջներ են որ մեր սիրտը կ'որորեն
Եւ ոսկեշող բաժակէ թոյն կը ծորեն:
Պարտասեալ մարդն ի զո՞ւր փնտոէ իր կուռն
Մինչ կը քանդի ամէն նեցուկ, հանգրուան:

Խոնջ թռչնակիս, նորափետուր, վարանող,
Ամէն հովէ, ամէն շուքէ սասանող,
Թո՞ղ որ նետուի ծոցըդ, Տէր, ոյժ կենսաւէտ,
Ո՞վ բացարձակ անշարժ միայն դու յաւէտ:

1897